

2015-2016թ  
9-10ԴԴ ԴԱՍԱՐԱՆ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**I. Լրացնել բաց թողնված բառերը (յուրաքանչյուր ճիշտ պատասխանը 0.1 միավոր-0.6 միավոր)**

- 1) Յուրաքանչյուր օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը կոչվում է \_\_\_\_\_:
- 2) Այն գեները, որոնք գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների միևնույն լոկուսներում կոչվում են \_\_\_\_\_:
- 3) Հատկանիշի այն դրսևորումը, որը քողարկում է հակադիր հատկանիշի դրսևորումը Մենդելը անվանեց \_\_\_\_\_:
- 4) Եթե օրգանիզմի գենոտիպում կան միանման \_\_\_\_\_ գեներ, որոնք ունեն միևնույն նուկլեոտիդային հաջորդականությունը, ապա օրգանիզմը կկոչվի \_\_\_\_\_:
- 5) Այն քրոմոսոմները, որոնցով տղամարդիկ և կանայք միմյանցից տարբերվում են կոչվում են \_\_\_\_\_:

**II. Ընտրեք ճիշտ պատասխանը (յուրաքանչյուր ճիշտ պատասխանը 0.1 միավոր-0.5 միավոր)**

1. **Հատիկավոր էնդոպլազմային ցանցի հիմնական ֆունկցիան նրա մասնակցությունն է.**  
A-լիպիդների կենսասինթեզին,  
B-սպիտակուցների կենսասինթեզին,  
C-ածխաջրերի կենսասինթեզին,  
D-նուկլեինաթթուների կենսասինթեզին:
2. **Ռիբոսոմների բաղադրության մեջ մտնում են.**  
A-սպիտակուցներն ու ռիբոսոմային ՌՆԹ-ն,  
B-լիպիդներն ու ռիբոսոմային ՌՆԹ-ն,  
C-սպիտակուցներն ու ածխաջրերը,  
D-միայն ռիբոսոմային ՌՆԹ:
3. **Ըստ կառուցվածքի, բաղադրության և ֆունկցիաների միտոքոնդրիումները նմանություններ ունեն.**  
A-քլորոպլաստների հետ,  
B-ռիբոսոմների հետ,  
C-լիզոսոմների հետ,  
D-բջջային կենտրոնի հետ:
4. **Քլորոֆիլ պիգմենտ պարունակում են հիմնականում.**  
A-քրոմոպլաստները,  
B-քլորոպլաստները,  
C-լիզոսոմները,  
D-լեյկոպլաստները:
5. **Լիզոսոմները ձևավորվում են.**  
A-ողորկ էնդոպլազմային ցանցի խուղակներում,  
B-հատիկավոր էնդոպլազմային ցանցի խոռոչներում,  
C-Գոլջիի կոմպլեքսում,  
D-բջջային կենտրոնում:

Այս մասում ոչինչ չգրել

III. Լրացնել գծապատկերը՝ բերելով օրինակներ / ճիշտ պատասխանը 0.5 միավոր/:

Անստեղ բազմացման եղանակներն են	Մեռական բազմացման եղանակներն են
1.	1.
2.	2.
3.	

IV. Գտնել ճիշտ պնդումները (յուրաքանչյուր ճիշտ պատասխանը 0.1 միավոր-0.5 միավոր)

1. Մոդիֆիկացիոն փոփոխականությունը կախված է միջավայրի պայմաններից և չի ժառանգվում:
2. Կա էնդոպլազմային ցանցի 2 տեսակ՝ հարթ և հատիկավոր:
3. Ներտեսակային գոյության կոնիվր տեղի է ունենում տարբեր տեսակների միջև՝ գիշատիչ և զոհ:
4. Օսլայի մոնոմերը ամինաթթուն է:
5. Բակտերիոֆագը կազմված է գլխիկից, պոչիկից և պոչային ելուններից:

V. Գտնել միտոզի և մեյոզի գործընթացների 4 տարբերություններ / ճիշտ պատասխանը 0.4 միավոր/:

Միտոզ	Մեյոզ

VI. Պատասխանել հարցին / ճիշտ պատասխանը 0.4 միավոր/:

Ինչպիսի՞ էկոլոգիական գործոններ գիտեք: Բերեք յուրաքանչյուրից մի քանի օրինակ:

VII. Գծապատկերել սպիտակուցի կառուցվածքային մակարդակները / ճիշտ պատասխանը 0.4 միավոր/:

VIII. Լուծել խնդիրը / ճիշտ պատասխանը 0.4 միավոր/

Մարդու խլությունը որոշող գենը ռեցեսիվ է նորմալ տեսողությունը պայմանավորող գենի նկատմամբ: Խուլ տղամարդու և նորմալ կնոջ ամուսնությունից ծնվեց խուլ երեխա: Գտնել ամուսինների գենոտիպերը:

IX. Կազմել ԴՆԹ-ի երկրորդ շղթան՝ նշելով նուկլեոտիդների միջև առաջացող կապերի բնույթը /ճիշտ պատասխանը 0.3միավոր/

Ա-Գ-Ց-Ց-Ա-Թ-Ա-Գ-Ց-Թ-Ա-Գ-Ց-Թ-Թ-Ա-Ա-Թ-Ա-Թ-Գ-Ց-Թ-Թ-Գ-